ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎԵՐԱԲԱՑՎԵՑ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՎԱՆԱՏՈՒՆԸ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ ՆՈՐՈԳՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՐԱՐ ՋԵՅՄՍ ԳԱԼՈՒՍՏՅԱՆԻՆ

Հունիսի 30-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ կատարվեց Մայր Աթոռի վերանորոգված Վանատան բացման արարողությունը: Անվանի բարերար Գալուստ Կյուլպենկյանի արդյամբ 1970-ական թթ. կառուցված Վանատան վերանորոգումը հոգացել է ԱՄՆ հայոց Արևելյան թեմի Թեմական խորհրդի և Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ, բոստոնաբնակ բարերար Ջեյմս Գալուստյանը՝ ի սեր և ի հարգանս իր ծնողների՝ Մարտիրոս և Մարիամ Գալուստյանների:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանները, նախագահությամբ Վեհափառ Հայրապետի, կատարեցին նորաբաց տան օրհնության արարողությունը: Այնուհետև սրտի խոսք ասաց ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը՝ գոհունակությամբ արձանագրելով այն փաստը, որ եկեղեցիներից զատ բացվում են նաև այլ շինությունների դռներ՝ կարևոր նպաստ բերելով Եկեղեցու գործունեությանը: «»

Վերջում օրհնության խոսք ասաց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ իր գնահատանքը հայտնելով կոչումով սարկավագ երիտասարդ բարերար Ջեյմս Գալուստյանին: Վեհափառը կարևոր համարեց ամեն մի հայի կապվածությունը և նվիրումը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին: «*Մայր Աթոռը յուրաքանչյուր հայորդու սրտի մեջ է: Եվ բնական է, որ յուրաքանչյուր հայորդի ցանկալով պիտի ցանկա, որ Մայր Աթոռը լինի պայծառաշուք, լինի այնպիսի տեսքի ու վիճակի, որ յուրաքանչյուր հայի սիրտ ցնծա ուրախությամբ և լցվի հպարտության զգացումով: Ամեն ոք, որ մտնի այստեղ, փառք տա Աստծուն, որ Մայր Աթոռն իր պատմությամբ ու անցյալով, իր ներկայով և իր վաղվա օրով հզոր է, գեղեցիկ և օրավուր պայծառանում է*»,- իր խոսքում ասաց Վեհափառ Հայրապետը:

Այնուհետև «Էջ Միածինն ի Հօրէ» շարականի երգեցողության ներքո Նորին Սրբությունը Հայաստանյայց Եկեղեցու «Ս. Գրիգոր Լուսավորիչ» բարձրագույն շքանշանով զարդարեց Ջեյմս Գալուստյանի կուրծքը:

Բացման արարողությանը ներկա էին թեմական առաջնորդներ, Մայր Աթոռի միաբաններ, ԱՄՆ հայոց Արևելյան թեմի Թեմական խորհրդի անդամներ և Մայր Աթոռի նվիրյալ բարերար զավակներ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՎԵՐԱՆՈՐՈԳՎԱԾ ՎԱՆԱՏԱՆ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ